

թիւն մը, 70-ական թուականներու վերջերուն, բուն իսկ մայրաքաղաքին մէջ: Ահաբեկիչները կը տեղային հարուած հարուածի վրայ, ու ժանախը կը սլայթէր նոյնիսկ ցարական սլաւտին մէջ, ահ ու սարսափ տարածելով: Ոստիկանութիւնը անզօր էր, սօլիցիական, բռնապետական բոլոր միջոցները անզօր էին, Ռուսաստանը կ'երթար դէպի անիշխանութիւն ու քոսս:

Վայրկեանը կրիտիկական էր, — նմանը դուցէ չտեսնուած Ռուսիոյ պատմութեան մէջ: Կայսրը, գլխահորոյս եւ յուսահատ՝ խորհուրդ կը դումարէ Զմեռային Պալատում, կը հրաւիրէ ամենէն բարձր ու հեղինակաւոր պաշտօնեաները, խորհրդականները: Ականատեսը վերին աստիճանի յուզիչ նկարագրութիւն մը կուտայ այդ հանդիսաւոր եւ դրամատիկ վայրկեաններու... Գիշեր է: Գրեղմանային անդորրութիւն մը կը տիրէ Զմեռային Պալատի մէջ: Մէկիկ-մէկիկ ներս կուգան հրաւիրեալները խորհրդաւոր նիստին համար, եւ հոգ, ուսական ուղղափառութեան ամենագոող քուրմերի շարքին կը բազմի նաեւ Կարսի հերոսը: Ամէնքը՝ խորապէս մտահոգ: Քոյի սենեակի մը մէջ, մերձ ի մահ պառկած է թագուհին — նոյն պալատին մէջ, ուր քիչ առաջ ահարկու դղրդիւնով սլայթեր էր յեղափոխականներու դժոխային մեքենան, փլցնելով շէնքի պատերուն մէկ մասը:

Ալեքսանդր II, հիւանդ ու մռայլ, սարսափահար՝ եղած ու գալիք վտանգներէն, — կը նախազահէ խորհուրդին: Հերթով խօսք կուտայ ժողովականներուն, որոնցմէ իւրաքանչիւրը կ'ըսէ, թէ ինչպէ՞ս, ի՞նչ միջոցներով կարելի է փրկել կայսրութիւնը: Գրեթէ ամէնքը կողմնակից են բուն արիւնոտ միջոցներու՝ յեղափոխութիւնը ճնշելու համար: Յանկը կ'աւարտի ոռու ուղղափառ պալատականներու, — եւ վերջինը կը խօսի ցարի հրամանով — Լօրիս Մէլիքով: Կը խօսի հակիրճ ճառ մը, յստակ, կտրուկ, առանց աւելորդաբանութիւններու: Ան ալ, անչուտ, միապետական մըն է: Ան ալ թշնամի է յեղափոխութեան եւ կ'ուզէ փրկել կայսրութիւնը, ցարը, Ռոմանովեան դահր: Բայց անոր ըսածը տարբեր բան մըն է: Ան դէմ է բիրտ, արիւնոտ, դրա-

կօնական միջոցներու, դէմ է այն կոպիտ մեթոտներուն, որոնցմով բոլոր բռնապետութիւնները երազեր են յաղթահարել յեղափոխութեան հիգրան...

Ան կը խօսի, որպէս եւրոպացի մը: Կը փաստարանէ որոշ ոէֆորմներու անհրաժեշտութիւնը: Կը չեչտէ մեղմ միջոցներու կարեւորութիւնը հանդէպ յեղափոխութեան: Վերջինը հետեւանք մըն է, անոր պատճառները վերացնելու է...

Եւ ամենէն առաջ՝ — Անհրաժեշտ է, կ'ըսէ Լօրիս, անձ մը նշանակել, կորովի, կամքոտ, վճռողական անձ մը, որ, ամենալայն իրաւասութիւններով օժտուած, վարէ առժամապէս կայսրութեան ղեկը...

Այս խօսքերը լսելուն պէս, կայսրը ոտքի կը կանգնի եւ ցուցամատը ուղղելով դէպի Լօրիս, կ'ըսէ.

— Դո՛ւք էք այդ անձը, որուն եւ կուտամ բոլոր լիազօրութիւնները:

Ու կը մեկնի:

Ժողովականներու մէջ՝ շփոթ, իրարանցում: Նախանձ, քէն, ատամներու կրճտոց ոռու ուղղափառ «փրկիչներու» մէջ՝ հայ intrus-ի «արմեաչկա»ի դէմ...

Բայց Լօրիս արխարար ու յաղթական, ինչպէս Կարսի բարձունքներում, ինչպէս Խարկովի, ժանտախտի աւերածներու մէջ, կը քալէ այդ բոլոր թշնամութիւններու ու նախանձներու վրայէն եւ կ'երթայ ստանձնելու ցարի ձեռքէն — դիքատատրութիւն...

— Սրաի եւ ոչ բոունցքի դիքատատրութիւն... այդպէս կ'ըմբռնէր իր կոչումը:

Եւ բոլոր աչքերը յառեցան դէպի դիքատատրը, բոլոր ազատականներն ու աքտորականները, ամբողջ քաղաքակիրթ աշխարհը լարուած ուշադրութեամբ կը սպասէր Լօրիսի ժեսթներուն: Նոյն ինքը յեղափոխական կուսակցութիւնը պահ մը զինադուլ հրատարակեց: Ամէնքը տարտամօրէն կը յուսային, թէ բան մը պիտի կատարուէր վերջապէս, ասիական քարացած բռնապետութեան մէջ: Ամէնքը քիչ թէ շատ կը հաւատային Լօրիսի անկեղծութեան, անոր վարչական տաղանդին եւ անոր նուրբ ղեւանազիտական տաքտին: